Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2251
ա

68
III

# ՀԱՇԻՒ

## ՏԱՓԻ ԹԱՂԻ

## ՔԱՄՈՅԵՆՑ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՅ

## 1902 Թ.

*Երեցփոխ Առաքել Վարդապետեանի օրօք*

ԹԻՖԼԻՍ
*Կ. Մարտիրոսեանցի տպարան* | Тип. К. Мартиросіанца.
Большая Ванкская ул., д. № 5.
1903

13548

# ՀԱՇԻՒ

ՏԱՓԻ ԹԱՂԻ

## ՔԱՄՈՅԵՆՑ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ

## 1902 [illegible]

*Երեցփոխ Առաքել Վարդապետեանի օրօք*

ԹԻՖԼԻՍ
Կ. Մարտիրոսեանցի տպարան | Тип. К. Мартиросіанца.
Большая Ванкская ул., д. № 5.
1903

# ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱՐԿՂԻ



| ՄՈՒՏՔ | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
|---|---|---|---|---|
| Առ 1-ն յունվարի 1901 թ. մնացորդ կանխիկ | | | 828 | 73 |
| Տարւայ ընթացքում մտած է՝ | | | | |
| I Կրպակների վարձ | | | | |
| Կրպակ № 1 Կվայչաձէից 1 տարւայ . . | 1600 | — | | |
| „ №2 Ֆրիդմանից 1 „ . . . | 864 | — | | |
| „ № 3 Կացից 9 ամիս եւ 10 օրվայ . . | 700 | — | | |
| „ № 4 Պալասնիկովից 1 տարւայ . . . | 804 | — | | |
| „ № 5 Տաուզլիխից 2 ամսվայ . . | 71 | 84 | | |
| „ № 5 Գրիգորեանից 2 ամսվայ . . | 74 | — | | |
| „ № 6 Կարլինսկուց 1 տարւայ . . . | 996 | 67 | | |
| „ № 7 Ցեյտլինից 1 „ . . . | 1404 | — | | |
| » № 8 Տիկ. Լազարեանից 5 ամսվայ . . . | 416 | 65 | | |
| — Տաուզլիխից անցեալ տարւայ պարտքը: . | 83 | 07 | 7014 | 23 |
| II Գնահատական եւ արքունական հարկերից | | | | |
| (Մասնագրած կրպակ վարձողների վրա) | | | | |
| Գնահատական հարկերի մի մասը . . . | 45 | 02 | | |
| Արքունական „ „ . . . | 48 | 87 | 93 | 89 |
| III Տիրաժ ընկած օբլիգացիաներից | | | | |
| Թիֆ. քաղաք. օբլիգացիաներից ա. փոխառ. | 1500 | — | | |
| » » » բ. » | 2100 | — | 3600 | — |
| IV Ստացած մուրհակներից | | | | |
| Գրիգոր Ադամեանից ստացած մուրհակի փոխարէն. . | | | 8000 | — |
| V Տոկոսներ տոկոսաբեր թղթերից | | | | |
| $^{0}/_{0}{}^{0}/_{0}$-ներ աւանդի, ընթացիկ հաշւի գումարն. բենտ. և այլն. | | | 1833 | 80 |
| *Փոխանցումն* | | | 16370 | 65 |

| ԵԼՔ | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| *Տարւայ ընթացքում* | | | | |
| I *Աւանդ դրած գումարներ* | | | | |
| ա. Առեւտրական բանկ մտցրած է . . | 7200 | — | | |
| բ. Փոխադարձ վարկի ընկերութ. . . | 4900 | — | 12100 | — |
| II *Ընթացիկ հաշիւ* | | | | |
| ա. Առեւտրական բանկ մտցրած է . . | 1297 | 81 | | |
| բ. Փոխադարձ վարկի ընկերութ. . . | 104 | 10 | 1401 | 91 |
| III *Գնահատական եւ արքունական հարկեր* | | | | |
| Վճարւած է Թիֆ. քաղաքային վարչութեան | | | | |
| ա. Գնահատական հարկեր . . . . | 425 | 79 | | |
| բ. Արքունական » . . . . | 281 | 10 | 706 | 89 |
| IV *Ռոճիկներ եկեղ. սպասաւորաց* | | | | |
| Վճարւած է նպաստ՝ | | | | |
| ա Յովհ. աւագ քահանայ Մարտիրոսեանին 1 տար. . | 510 | — | | |
| բ. Յովս. քահանայ Տէր Պետրոսեանին 1 » . | 510 | — | | |
| գ. Սարկաւագ Միքայէլ Տէր Յարութիւնեանին 1 » . | 385 | — | | |
| դ. Ղազարոս Ամիրջանեանին (այժմ քահ. 4 ամս.) . | 120 | — | | |
| » Նրան ևս միանւագ . . . . . | 50 | — | | |
| ե. Եկեղեցոյ ժամկոչ Պետրոսին . . . . | 180 | — | | |
| զ. » Ծառայ Թորոսին . . . . | 180 | — | 1935 | — |
| V *Մանր ծախսեր* | | | | |
| Ըստ նախահաշւի տարւայ ընթ. ծախսած է. . . | — | — | 360 | — |
| ***Փոխանցումն*** | | | **16503** | **80** |

## ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Փոխանցումն* | | | 16370 | 65 |
| VI Լուսագնից | | | | |
| Ջահից, Թաղման և մկրտութեան օրինակատարումներից | | | 51 | 60 |
| VII Կողմնակի մուտքեր | | | | |
| Զանազան կողմնակի մուտքեր . . . | 42 | — | | |
| Եկեղեցոյ օծումից մնացած մոմի փող . . | 9 | — | | |
| Պատուեանից նուէր . . . . | 1 | — | 52 | |
| VIII Եկեղեցական Գոյքերից | | | | |
| Անրգով փճացած գործերից, ջահից և եկեղեցական մանր ու հին իրեղէններից գոյացած . . | | | 443 | 20 |
| IX Կտակած գումարներից | | | | |
| Հանգուցեալ տիկին Թագուհի Փանոսեանի կտակած գումարների հաշուից Պ. Յովսէփ Ամիրխանեանի միջոցով յանձնուած | | | 1000 | — |
| X Ստացած գրաւականներից . . | | | | |
| Տարւայ ընթացքում նոր կապալառուներ | | | | |
| Կարլինսկուց դրամով կանխիկ . . . | 100 | — | | |
| Օրլովից . . . . | 100 | — | | |
| Գրիգորեանից. . . . . | 100 | — | 300 | — |
| *Փոխանցումն* | | | 18217 | 45 |

## ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Փոխանցումն* | | | 16503 | 80 |
| VI Նոր գնուած գոյք | | | | |
| Վառարան և տուփ մեռոնամանի համար . . | | | 26 | 15 |
| VII Կաւկասաններ | | | | |
| Կրպակների վրայ ծախսուած է տարւայ ընթ. . . | | | 29 | 94 |
| VIII Կոնսիստորիական ծախսեր . . | | | | |
| Յորդանանի շինութեան և Վեհ. Կաթողիկոսի կեցութեան ծախս . . . . . | 110 | — | | |
| Գործակալական ռոճիկ Երզնկեան քահանային . | 40 | — | 150 | — |
| Մելեան քահանային նրա թեմական տեսչութեան օրօք մնացած ապառիկ ռոճկի մասը . . . | | | 100 | — |
| IX Նպաստ Սարկաւագ Միքայէլի որդոյ | | | | |
| Նրա ուսման վարձը առևտրական դպրոցում . . | | | 120 | — |
| X Հաշւապահին և Գործավարին | | | | |
| Վարձատրութիւն հաշւապահին . . . | 200 | — | | |
| « Գործավարին . . . | 100 | — | 300 | — |
| XI Ապահովագրական տուրք . . | | | | |
| Կրակից ապահովագրելու պրեմիայ . . . | | | 29 | 76 |
| XII Ջրից օգտւելու վարձ . . | | | | |
| Քաղաքային վարչութեան ջրի համար վճարած է . | | | 4 | 58 |
| XIII Գրաւականներ | | | | |
| Վերադարձրած է Կացին . . . . | 100 | — | | |
| » Տուրգլիևին գրաւած պարտքի փոխարէն | 60 | 84 | 160 | 84 |
| *Փոխանցումն* | | | 17425 | 07 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Փոխանցում* | | | 18217 | 45 |
| XI Ընթացիկ հաշիւներ | | | | |
| ա. Առևտրական բանկից յետ է վերցրած | 14770 | — | | |
| բ. Փոխադարձ վարկի ընկերութիւնից յետ է վերցրած. | 3200 | — | 17970 | — |
| *Համագումար* | | | 36187 | 45 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| *Փոխանցում* | | | 17425 | 07 |
| XIV Նորակառոյց եկեղեցի | | | | |
| Ծախսուած է վերաշինութեան մասնաժողովի մատեանով և վճարուած. | | | | |
| 1) Ճարտարապետներին 16, 426 ռ. 4% | 657 | 06 | | |
| 2) Գործնակի ծախսեր | 151 | 75 | | |
| 3) Գնած փայտեղէնին | 1575 | 08 | | |
| 4) Մանր մասալա, բալկաներ, ցեմենտ և այլն | 137 | 75 | | |
| 5) Օրավարձ մշակներին | 24 | 16 | | |
| 6) Աւազի | 466 | 68 | | |
| 7) Կիր 2 կապալառուներին | 217 | 22 | | |
| 8) Աղիւսի 26,000 Եօլեանին | 442 | — | | |
| 9) « 166,388 Ջեննեկերին | 2662 | 01 | | |
| 10) Սանահնի քարի | 384 | 44 | | |
| 11) Որմնադիր Օրլովին | 860 | 15 | | |
| 12) Եկեղեցոյ հիմքը ասֆալտով ծածկելուն | 142 | 63 | | |
| 13) Անդրիօլետի վարպետին ցեմենտի 451·30 | | | | |
| « Նրան եւ եկեղեցոյ շինութեան վարձ 9487·03 | 9938 | 33 | | |
| 14) Վերակացու Քաշեանեանի տարեկ. ռոճիկ | 480 | — | | |
| 15) Անակնկալ ծախսեր | 89 | 70 | | |
| 16) Կայարանից քար կրելու վարձ | 65 | — | | |
| 17) Մնացորդ վերաշինութեան մատեանով | 6 | 18 | 18300 | 14 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | — | — | 35725 | 21 |
| Մնացորդ առ 1-ն յունվարի 1903 թ. | — | — | 462 | 24 |
| *Համագումար ռ.* | | | 36187 | 45 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Առ 1-ն յունվարի 1903 թ.* | | | | |
| 1. Եկեղեցին ունի դրամով կանխիկ . . | | | 462 | 24 |
| 2. Օբլիգացիաներ I փոխառ. կար տարւայ սկզբ. | 2200 | — | | |
| ընկած է տիրաժ | 1500 | — | 700 | — |
| 3. Օբլիգացիաներ II փոխառ. տարւայ սկզբում կար | 10900 | — | | |
| ընկած է տիրաժ | 2100 | — | 8800 | — |
| 4. Արքունական 4%-բեր ռենտա կար և մնում է | — | — | 6400 | — |
| 5. Թիֆլ. քաղ. վարկի ընկերութ. %-բեր թղթ. կար և մնում է | — | — | 7400 | — |
| 6. Ընթացիկ հաշիւ | | | | |
| ա) Առևտրական բանկ. տարւ. սկզբ. կար 14898 12 | | | | |
| հանուած է տարւայ ընթացքում 14770 — | 128 | 12 | | |
| Մտցրած է « « | 1297 | 81 | 1425 | 93 |
| բ) Փոխադարձ դրամ ընկերութեան կար 3227 10 | — | — | | |
| հանուած է տարւայ ընթացքում 3200 — | 27 | 10 | | |
| Մտցրած է » » | 104 | 10 | 131 | 20 |
| 7. Աւանդի գումարներ | | | | |
| ա) Առևտրական բանկում կար տարւայ սկզբ. | 2200 | — | | |
| Տարւայ ընթացքում մտցրած է նորից | 7200 | — | 9400 | — |
| բ) Թիֆլիսի փոխադ. վարկի ընկ. տար. սկզբ. կար | 4000 | — | | |
| տարւայ ընթացքում մտցրած է նորից | 4900 | — | 8900 | — |
| 8. Պարտականներ եկեղեցոյ | | | | |
| ա) Կ. Ջալալեան . . . . | 8504 | 23 | | |
| բ) Տիկ. Լազարեան . . . . | 179 | 21 | | |
| գ) Տուգլիխ . . . . | 266 | 06 | 8949 | 50 |
| 9. Գրաւականներ տոկոսաբեր թղթերով | | | | |
| ա) Ընդրիօլետից ստացած 2 ռէնտա | 1000 | — | | |
| բ) Պատկովից » 3 թ. ք. III փոխ. | 300 | — | | |
| գ) Կվաչաձէից » 1 խաղ. փոխ. | 100 | — | | |
| դ) Ֆրիդմանից » 1 ռէնտա | 100 | — | 1500 | — |
| 10. Նորակառոյց եկեղեցոյ հիմքի ծախսը 1901 թ. | 8759 | 86 | | |
| պատերը, պատւանդանը 1902 թ. | 18300 | 14 | 27060 | — |
| *Հաշւեկշիռ . .* | | | 81128 | 87 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| *Առ 1-ն յունվարի 1903 թ.* | | | | |
| Եկեղեցին ունի պարտք | | | | |
| 1 Ստացած գրաւականներով ա) Ցէյտլինից կանխիկ | 140 | — | | |
| բ) Պալատնիկովից » | 100 | — | | |
| գ) Կարլինսկուց › | 100 | — | | |
| դ) Գրիգորեանից » | 100 | — | | |
| ե) Յակոբեանից » | 100 | — | | |
| զ) Օրլովից » | 100 | — | 640 | — |
| 2. Ստացած գրաւականներ տոկոսաբեր թղթերով | | | | |
| ա) Անդրիօլետից | 1000 | — | | |
| բ) Պատկովից | 300 | — | | |
| գ) Կվաչաձէից | 100 | — | | |
| դ) Ֆրիդմանից | 100 | — | 1500 | — |
| 3. Եկեղեցոյ զուտ դրամագլուխը | | | | |
| 1) Օբլիգացիաներ I փոխ. Թիֆ. քաղ. | 700 | — | | |
| 2) „ II „ „ | 8800 | — | | |
| 3) Արքունական 4%-բեր ռէնտեր | 6400 | — | | |
| 4) Թիֆ. քաղ. վարկի ընկ. % բեր թղթ. | 7400 | — | | |
| 5) Աւանդ առևտրական բանկում | 9400 | — | | |
| 6) Աւանդ Թիֆ. փոխադարձ վարկի ընկեր. | 8900 | — | | |
| 7) Ընթացիկ հաշւով 2 բանկում | | | | |
| ա) Առևտրական 1425 93 | | | | |
| բ) Փոխադարձ դրամ. 131 20 | | | | |
| գ) Կանխիկ 462 24 2019 37 | | | | |
| որից հանած գրաւականները 640 | 1379 | 37 | 42979 | 37 |
| 4 Եկեղեցոյ պարտականներ Ջալալեանը՝ Տուգլ. Լազարեան | | | 8949 | 50 |
| 5. Նորակառոյց եկեղեցի | | | 27060 | — |
| *Հաշւեկշիռ* | | | 81128 | 87 |

## ՄՈՒՏՔ ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՒԻ ԵԿԵՂԵՑՈՅ ԸՍՏ ԺԱՊԱՒԻՆԵԱԼ ՄԱՏԵԱՆԻ ԵԼՔ

### ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առ 1-ն յունվարի 1902 թուականի | | | | |
| 1. Ժապաւինեալ մատեանով եկեղեցին ունէր դրամագլ. | 54412 | 97 | | |
| 2. Վերաշինութեան մասնաժողովի մատեանով կանխ. | 140 | 14 | 54553 | 11 |
| 3. Տարւոյ ընթացքում եղել է մուտք՝ | | | | |
| ա) Կրպակների վարձ | 7014 | 23 | | |
| բ. Աճրդով վաճառած եկեղեց. գոյքերից | 443 | 20 | | |
| գ. Դրամագլխի տոկոսներից | 1833 | 80 | | |
| դ) Հանգուցեալ տիկ. Փա՛ռսեանի կտակածից | 1000 | — | | |
| ե) Լուսագին մկրտութիւններից և այլն | 51 | 60 | | |
| զ) Գնահատական և արքունական հարկ | 93 | 89 | | |
| է) Կողմնակի մուտքերից | 52 | — | 10488 | 72 |
| Գրաւականներով անցեալ տարւոյ | 2000 | 84 | | |
| " նոյն տարւոյ | 300 | — | 2300 | 84 |
| Հանրագումար | | | 67342 | 67 |

### ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առ 1-ն յունվարի 1903 թ. | | | | |
| 1. Եկեղեցոյ դրամագլուխը է՝ | 42979 | 37 | | |
| 2. Վերաշինութեան մասնաժողովի մատեանով կանխիկ | 6 | 18 | 42985 | 55 |
| 3. Տարւոյ ընթացքում եղել է ծախք | | | | |
| ա. Ռոճիկներ եկեղեցոյ սպասաւորաց | 1935 | — | | |
| բ. Գնահատական և արքունական հարկեր գոյքի | 706 | 89 | | |
| գ. Մանր ծախսեր ըստ նախահաշւի | 360 | — | | |
| դ. Կրպակների կարկատաններ | 29 | 94 | | |
| ե. Մելեանց քահանային ապառիկ մնացած ռոճիկը | 100 | — | | |
| զ Հաշւապահին և գործավարին | 300 | - | | |
| ե. Սարկաւագ Միք. Տէր Յարութիւնեանի որդոյ նպաստը առևտրակ. ուսումնար. | 120 | — | | |
| զ Յորդանանի շինութեան և վեհ. Կաթողիկոսի կեցութեան ծախս | 110 | — | | |
| է. Գործակալ Երզնկեան քահ. ռոճիկ | 40 | — | | |
| ը. Կայքերի ապահովագրելու ծախք | 29 | 76 | | |
| թ. Քաղաքային վարչութեան ջրի փող | 4 | 58 | | |
| ժ. Գնած նոր վառարան, տափ մեռոնի | 26 | 15 | 3762 | 32 |
| 4. Գրաւականներով վերադարձնելու է | 2140 | — | | |
| " Վերադարձրած է | 160 | 84 | 2300 | 84 |
| 5. Նորակառոյց եկեղեցոյ ծախսը 1902 թ. | — | - | 18293 | 96 |
| Հանրագումար | | | 67342 | 67 |

Երեցփոխ Տափի Թաղի Քամոյեան Սուրբ Գէորգ Եկեղեցոյ — Առաքել Վարդապետեան

Հաշւապահ՝ — Յակոբ Յակոբեան

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՏԱՓԻ-ԹԱՂԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՑՓՈԽԱՆԻ

### 1) ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՇԱՐԺ ԿԱՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

*Ա. Առ 1-ն Յունվարի 1900 ամի եկեղեցին ունէր անշարժ կայք՝ որ բաղկացած էր տասն խանութից, ութ սենեակից, երեք նկուղից և մի խոհանոցից, որոնցից պակասել է առ 1-ն Յունվարի 1903 ամի երկու սենեակ և մի նկուղ, նաև ժամկոչների փոքրիկ սենեակը։ 1902 թուին—օգոստոսի 1-ին դատարկուել է երկու կրպակ՝ ուր դարսւում և տաշւում են եկեղեցու շինութեան քարերը. մի ուրիշ կրպակի ¾ մասն էլ վերցուած է՝ բակը լայնացնելու և բեռնակիր սայլերի երթևեկութիւնը դիւրացնելու համար։ Մնացած միւս խանութները շահագործւում են ըստ կարգին՝ ինչպէս կտեսնուի նախահաշւից։*

*Բ. Եկեղեցին ունի երեք յարկանի մի տուն Բէլի-Կլիւչում, որ գնուած է 1885 թուին։ Գործից երևում է, որ այս տունը գնել է նախկին երեցփոխ պ. Գ. Աքիմեանը և յանձնել ժամանակաւորապէս տեղական ծխական դպրոցին։ Կոնսիստորիայից ստացուած վերջին տեղեկութիւնից երևում է, որ 1898 թուին հայոց ծխական դպրոցները փակուելուց յետոյ, ժողովրդական դպրոցների վարչութիւնը գրաւել է նրան։ Համաձայն Թիֆլիսի դատաստանական պալատի վճռի, այս տունը այժմ վերադարձուած է եկեղեցուն և կոնսիստորիայի կարգադրութեամբ ժողովրդական դպրոցների վարչութիւնից ընդունել և ստացել է Բէլի-Կլիւչի վիճակի գործակալը։ Յունվարի 17-ին թ. 337 կոնսիստորիան հրամանագրում է ինձ ստանալ այս տունը որպէս եկեղեցու սեփականութիւն, սակայն ներկայումս հնարաւորութիւն չունենալով կատարելու յիշեալ հրամանը, անշուշտ իր ժամանակին պատիւ կունենամ հանգամանօրէն զեկուցանել այդ մասին յաջորդ ծխական ժողովին։*

### 2) ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

*Եկեղեցու շարժական գոյքը առ 1-ն յունվարի 1900 ամի ժապաւինեալ մատեանով և առանձին ցուցակով ստացել եմ իմ նախորդից՝ 134 յօդուածով յիշատակուած հնմաշ եկեղեցական զարդեր և իրեղէններ։ Այս գոյքից անցեալ տարի աճուրդով վաճառուած է 11 յօդուածով 52 կտոր և մի ջահ, որոնցից ստացուած գումարը մուծուած է հաշուէմատեան։*

*Երեք տարուայ ընթացքում Յովհաննէս սւագ քահանայ Մարտիրոսեանցի ձեռքով իր ծխականներից մատեան է մուծուած երկու շուրջառացու զառ՝ մէկը պ. Յովհաննէս Ճաղինեանցի հանգուցեալ դստեր յիշատակին, միւսը՝ Թագուհի Փանոսեանի. ապա նաև մի դիազարդի զառ հանգուցեալ Վարդանեանի յիշատակին։*

*Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանցի ձեռքով իր ծխականներից ստացուել և մատեան են մուծուել՝ ա) մի դեղին շուռջառ հանգուցեալ Մարկոսեանցի յիշատակին, բ) մի դեղին շուրջառ հանգուցեալ Կ. Մութաֆեանցի յիշատակին, գ) 13½ արշին հասարակ զառ՝ հանգուցեալ Յ. Չիլինգարեանի յիշատակին և դ) վեց արշին հասարակ զառ՝ հանգուցեալ Կ. Բարսամեանի յիշատակին. սրանք մուծուած են մատեան որպէս նուէր եկեղեցուն Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանից։ Իսկ հանգուցեալները Բ. Արովեանցի, Գ. Դանիէլբէգեանցի և Ռ. Փիրումեանցի յիշատակին նուիրած շուրջառացու զառերը չէ յանձնում մատեան մուծելու՝ առարկելով, որ նուիրատուները իրան են նուիրել։*

### 3) ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

*Առ 16-ն դեկտեմբերի 1899 ամի եկեղեցին ունեցել է սեփական դրամական միջոց 50471 ր. և գրաւականներ 220 ր. ընդամենը 50691 ր. իսկ երեք տարի և կէս ամսում աւելացել է 19568 ր. եթէ սրան վրայ աւելացնենք աւանդների և ընթացիկ հաշուի անցեալ 1902 թուի %% 1146 ր. և ապառիկ 445 ր. 27 կ. դուրս է գալիս, որ այդ կարճ ժամանակամիջոցում եկեղեցին ունեցել է զուտ եկամուտ 21151 ր. իսկ գրաւական 2140 ր.*

### 4) ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՒ ՆՈՐԸ ԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

*Առ 1-ն Յունվարի 1900 ամի տակաւին կանգուն էր մեր խախտուած եկեղեցին՝ սակայն նրա վերաշինութեան մասին գործ սկսուած և մակարդակ կազմուած ճարտարապետ Զեմկեվիչից։ Այս բոլորը*

եթէ ոչ շահաւէտ, բայց և ոչ մի դէպքում վնասակար գործ։ Այժմ երբ կոնդակը առաջարկում է ինձ իմ առաջին գրաւականը զիջանել յօգուտ եկեղեցւոյն արդեօք կարծւում է, թէ ես իրաւունք կը վերապահեմ զիջանելուց յետոյ և ստանալ կալուածքիցը մի աւելցուք գումար. եթէ ոչ, ապա ես ինչպէս կարող եմ մի այդպիսի ինձ համար մեծ գումար, որպիսին է վեց հազար րուբլին, տալ եկեղեցւոյն, երբ այդ իմ կարողութիւնիցս բարձր է. իսկ եթէ յոյս կայ, որ վեց հազարի կ'հասնի կալուածքը իւր վաճառմամբը և մի որոշ գումար էլ աւելի կը մնայ, չէ որ ես իրաւունքս այսօր եկեղեցւոյն զիջանելուց յետոյ, իրաւունք չեմ ունենալ օգտուել և ոչ մի կոպէկից, որովհետև կայ այսօր կալուածքի վերայ և օտար անձին երկրորդ գրաւական թերթ և եթէ այդպէս է, եթէ վեց հազարից դուրս կոնդակը յոյս ունի, որ այլ և գումար ստացուի, ապա վերոյիշեալ Կոնսիստորիայի նախանդամ վարդապետը և արդի երեցփոխանը ինչու այնքան հաստատամտութեամբ մերժեցին լսել իմ առաջարկութիւնս և Ջալալեանցի թախանձանքը նորա կալուածքը ընդունել երկրորդ գրաւականաւ յապահովութիւն եկեղեցական պարտուց և եթէ այդպէս, այսօր ամենայն իրաւամբ և արդարութեամբ Ատեանդ և կամ Ծայրագոյն Հոգևոր Իշխանութիւնը թող բարեհաճի պահանջել այդ վնասը Գարեգին վարդապետ Յովսէփեանից և պ. Ա. Վարդապետեանցից։ Վերջապէս՝ շուտով կը լրանայ չորս տարին այն օրուանից, երբ պ. Ջալալեանցը գրաւ է դրել իւր Աղէքսանդրապօլի կալուածքը ինձ մօտ և ինձանից ստացել այն վեց հազար րուբլին, որը ես պարտք եմ արել ոմն աստիճանաւոր օտար ազգի Պագօսկուց, իմ Տփխիսում գտնուած կալուածքներիս գրաւականաւ, որի չորս տարին նոյնպէս շուտով լրանում է և իմ պարտաթղթերս Պագօսկու այրին արդէն յանձնել է պ. Պետրոս Քալանթարեան փաստաբանին իւր ժամանակին ինձանից պահանջ յայտնելու։ Արդ անհրաժեշտաբար պէտք է վաճառուի Ջալալեանցի կալուածքը և այն ոչ ուշ, քան սեպտեմբերի 20 ը այսինքն մի ամսից յետոյ, որպէս զի ես նոյն գումարովը վճարեմ Պագօսկու այրուն Ջալալեանցի պարտքը. հետևաբար ես դրամի տէր չեմ, ուստի և չեմ կարող զիջանել իմ գրաւականը յօգուտ եկեղեցւոյ։ Համեստ կարծիքս է՝ բարեհաճել սպասել Ատեանդ մինչ սեպտեմբերի 20-ը ց'վաճառումն, գուցէ ես մի ծառայութիւն կարողանամ անել յօգուտ եկեղեցւոյ պարտուց։ Բայց վերջապէս ինչ կապ կայ իմ և պ. Կ. Ջալալեանցի մէջ ինչու ես նրա, այն էլ այդքան մեծագումար պարտքը պէտք է իմ վզիս կապեմ. ես, որ հազիւ կարողանում եմ քրտնաջան աշխատանքովս օրուայ պարէնս հոգալ։ Եթէ հարկ կայ լրացնելու եկեղեցական դրամի պակասը ընդհանուր հանգանակութեամբ, ես այո, պատրաստ եմ, ըստ իմ նիւթական կարողութեան, հաւասարների կրկնակին նուիրել եկեղեցւոյն։ Արդ անկարող եմ ես կատարել կոնդակի պահանջը, թէև ես և ինձ ճանաչում եմ, իբրև իմ սուրբ եկեղեցւոյ, հարազատ, որպէս ասւում է այդ նոյն կոնդակի մէջ։ Վասն որոյ աղաչում եմ նորին Սրբութեան իմ սուրբ եկեղեցւոյ արժանաւոր պետին, չհամարէ իւր «բարեկամին» ապաշնորհ և ապերախտ, վասն զի կամ և մնամ միշտ շնորհապարտ նուաստագոյն բարեկամ և խոնարհագոյն ծառայ իմս Օծեալ Հայրապետի՝ բժշկապետ Բագրատ Նաւասարդեանց»։

Վերոյգրեալից դժուար չէ գալ այն եզրակացութեան, որ պ. բժ. Նաւասարդեանցը գործի սկզբից յոկ մի նպատակ է ունեցել, այն է գործը յետաձգել տալ՝ որպէս զի տունը 'ի վաճառ հանելու ժամանակամիջոցը լրանայ և չ'զրկուի իր 6000 րուբլուց։ Նրան փոյթ չէ երբէք Վեհափառ Հայրապետին մոլորեցնելու ջանքը և հասարակական կարծիքը։ Սրան ապացոյց այն, որ տան վաճառումից յետոյ նա ոչ մի խօսք չէ ասել վաճառումից մնացած այն աւելորդ 2300 րուբլու մասին, որը որպէս ծառայութիւն խոստանում է մատուցանել իր բացատրութեան մէջ։

Գործը յանձնուած է դատաստանական քննութեան բոլոր ապացուցականներով հանդերձ 'ի 18-ն դեկտեմբերի 1902 ամի թ. 51, որի հետևանքի մասին կը զեկուցանեմ իր ժամանակին։

## 6) ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՈՒԻ ԵՒ ՆԱԽԱՀԱՇՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

1902 թ. դրամական հաշիւը և ներկայ 1903 թ. նախահաշիւը մի քանի օր առաջ տպագրուած ցրուել եմ բոլոր ծխականներին. ուստի սրա վերաբերմամբ աւելորդ եմ համարում մանրամասնութեան մէջ մտնել, նախ այն պատճառով, որովհետև հաշիւը կազմուած է ընդարձակօրէն և պարզ, երկրորդ որ բոլոր կէտերը մանրամասն կերպով կպարզի իմ ներկայ 1903 թ. նախահաշիւը, որը մեծ կապ ունի անցեալ տարուայ հաշուի հետ։ Այս նախահաշիւը և 1902 թուի հաշիւը ներկայացնում եմ սրա հետ ծխական ժողովի բարեհայեցողութեան և հաստատութեան.

'Ի վերջոյ պատիւ ունիմ ծխական ժողովի որոշման ներկայացնել հետևեալը.

1) Թիֆլիսի ա. մ. հայոց եկեղեցիների գործակալը իր գրութեամբ 'ի 20-ն փետրվարի սոյն ամի թ. 68 խնդրում է փութալ ուղարկել նրան Հոգևոր Ատեան ներկայացնելու մեր եկեղեցու վրայ մասնատրուած 50 րուբլի ծախք, Վեհափառ Կաթուղիկոսի կեցութեան և ընդունելութեան համար յ3-էն ց'21-ն սեպտեմբերի 1902 ամի։

և 2) Անի քաղաքի վանահայր Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանը դիմելով ինձ, խնդրում է մեր եկեղեցու հին զանգակներից մէկը նուիրել Անիի վանքին, որը մինչև այսօր զուրկ է նրանից։ Համոզուած լինելով, որ սրանք իրանց փոքրութեամբ և հնութեամբ պիտանի չեն կարող լինել մեր նորակառոյց եկեղեցւոյն, ուստի առաջարկում եմ ծխական ժողովին 'ի դիմաց մեր եկեղեցու նուիրել մեծ զանգակը Անիի մենաստանին, այլ և եկեղեցու մի քանի հնամաշ զգեստներ, այն է՝ սև վարագոյրը, մի քանի շապիկներ, մի հին շուրջառ, երկու աշտանակ և այլն՝ որոնք անպէտք կ'ճանաչուին մեր եկեղեցու համար. մանաւանդ՝ երբ հոգևոր իշխանութիւնը անյարմար է համարում աճուրդի հանել նրանց։

*Նրնջիող՝ Առ. Վարդապետեանց։*

Дозволено Цензурою, Тифлисъ 31 марта 1903 г.

Тип. К. Мартиросіанца.